

բայց Հայկական բաժինը մեծ տեղ կը զրաւէ. և կը ստորաբաժանուի : Բանասիրական բաժնին մէջ կ'երևան հետևեալները Հ. Բ. Սարգիսեան «Ե՞ազումն հայ տառից» . — « Սոկրատայ հին թարգմանութեան հրատարակութիւնն և Մովսէս Խորենացի» :

Հ. Ալիշան «Հեղինակ Աղուանից պատմութեան» :

Հ. Յ. Թորոսունան «Ի՞նչ առընչութիւն կայ հին հայոցի Պաւղիկեանց և այժմու կաթողիկեայ Բուլղարաց մէջ» . — «Համառու տեսութիւն Կորհան և իւր զրու-

Հ. Ս. Էփրիկ. «Վանայ ծովակի կղզիներ - Աղթամար» . որ կը շարունակուի նաև 1898ին :

Բացի միարաններէն բանասիրական բաժնոյն կը մասնակցէին նաև Արտաքին յօդուածագիրներ ինչպէս կ. Յ. Բ. Բասմաշիան «Յարաւէզր» . — «Թղթակցութիւն բնեազրաց մասին» . — «Տուպական արձանագրութիւն Մանակերտի» :

Խ. Յովհաննիսեան «Մովսէս Խորենացի ըստ բեւեազիր արձանագրութեանց» . — Թրգմ. «Բեւեազիր արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում» ... :

Հ. Յ. Աճառեան «Մովսէս Կաղանկատուացի, բննութիւն անոր գրութեան ժամանակին վերայ» . — Քննութիւն և համեմատութիւն Զէյթունցի աւանդական պատմութեան մը. Գողին պատմութիւնը» . Եւ ուրիշներ՝ որոնց պատասխանած են բազմավէպի Սուրհանդակին :

Պատասխանուած են հետևեալ նիւթերուն «Ազգային մեծ մատենագիր մը» . — Ազգենուս մէջ բառարանաց յաճախութիւն . — Անուններ հայկ. ամսոց . — Աշխարհաբարի և գրարարի ինդիր . — Խոյր կամ միտր . — Տառադարձութեան խնդիր :

Խոկ թովմաս Թերգեան կը սկսի իր մէկ հրաշալի գործը «Գիշեցկագիտութիւն» որ և կը շարունակուի յաջորդ տարին :

Հ. Մ. Պոտուրնաց արայարելի



Հ. Մ. Պոտուրնաց

թեան վերայ» . — «Թատրոն առ նախնի հայս» . — «Նկարչութիւն և ճարտարապետութիւն մեր նախնեաց ժամանակ» . — «Քրիստոսի ծննդեան տօնն ըստ սովորութեան հայկ. եկեղեցւոյ» (Հոն՝ և Հացունին Հ. Վ.) . — Եւ թարգմանութիւն Գելզերի «Դիցարանութիւն Հայոց»ին :

Հ. Վ. Հացունի «Ե՞րբ ո, լո, չ, և ե՞ր չի» . — «Հայկական եկեղեցւոյ երգերն» . — « Եարականը (Եիրառութիւն յեկեղ. հայ.) , «Տարւոյն երկոտասան ամսոց անուանը» . — Ուղղագրութիւն չ ժխտականին, վերայ բառին և յ զրոյն առնախնիս» :

Ուրիշ բան է զորովանը՝ ուրիշ բան է բարերարինը . (Թոմազէոյ) :

Պարագ կատարէ և մի՛ վախեր :

Մարդ դիւրաւ կը միտ չարութեան կողմը և գծուարաւ կը հետևի բարւոյ :

Հոգին ուրիշ չի մօնար այն տունը՝ ուր կուր, խովութիւն և ատելութիւն կայ . (Ս. Ֆր. Ա.) :

Անկեղծ մարգը՝ սկի է :

Գիտուն և Աստուածալազտ անձը՝ ադամանդ է :

Ուրախ զուարթ երեկոյթին՝ տխուր առաւոտ կը յաջորդէ . (Թովմ. Գեմբ) :

Կոպտութիւնը՝ աւելի տպառութիւն է, քան թէ հպարտութիւն :